ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ԸՆԿԵՐ Ն. Ս. ԽՐՈՒՇՉՈՎԸ ԲՅՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Այս տարվա մայիսի 8-ին Բյուրականի աստղադիտարանում հյուր եղավ ՍՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ Ն. Ս. Խրուշչովը, որ Երևան էր ժամանել Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակի հոբելյանական տոնակատարությանը մասնակցելու համար։

Մեծապատիվ հյուրին ուղեկցում էին Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ն. Չարոբյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Ե. Քոչինյանը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության նախագահ Շ. Մ. Առուշանյանը, Սովետական Միության մարշալ Ի. Խ. Բագրամյանը և այլ պաշտոնական անձինք։ Բյուրականում ընկեր Խրուշչովը հանդիպում ունեցավ Հայաստանի գիտնականների մի մեծ խմբի հետ։

Բարձրաստիճան հյուրին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը, Ակադեմիայի նախագահության անդամները, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ, ակադեմիկոս Ն. Ի. Մուսխելիշվիլին։

Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը թանկագին հյուրին պատմեց հայ աստրոֆիզիկների հետազոտությունների մասին, ցուցադրեց աստղային երկրների գիտական մեծ արժեք ներկայացնող, Բյուրականում արված բազմաթիվ լուսանկարները, այդ թվում մեղանից հարյուր միլիոնավոր լուսային տարի հեռու գտնվող գալակտիկաներից մեկի ֆոտոթիթեղը։ Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը ասում է, որ աստղադիտարանում կատարվող գիտական հետազոտությունների գլխավոր նպատակն է ուսումնասիրել տիեզերքում տեղի ունեցող ֆիզիկական պրոցեսները, ավելի խորը թափանցել տիեզերքի գաղտնիքների մեջ։

Ընկեր Ն. Ս. Խրուշչովը այնուհետև ծանոթանում է Աստղադիտարանի գիտական սարքավորումների հետ։ Նա կարում է աշտարակներից մեկի մուտքը փակող կարմիր ժապավենը և առաջինը բարձրանում աշտարակ, որտեղ տեղակայված է Շմիդտի սիստեմի մի նոր հեռադիտակ, որը իր մեծությամբ երկրորդն է աշխարհում։

Նիկիտա Սերգեևիչ Խրուշչովը ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանին և բացատրություն տվող գիտնականներին հարցրեց Լենինգրադի օպտիկական գործարանում ստեղծված այդ հեռադիտակի առավելությունների, նրա փորձարկումների ընթացքի մասին և շնորհավորեց գիտնականներին ու կառուցողներին հզոր դիտակայանի կառուցման և սարքավորումների տեղադրման աշխատանքների ավարտման կապակցությամբ։

Աստղադիտարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Ն. Ս. Խրուշչովի գործարար զրույցը ռեսպուբլիկայի ականավոր գիտնականների հետ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ս. Ս. Մկրտչյանը, Հ. Գ. Մաղաքյանը, Ա. Լ. Մնջոյանը, Ս. Ն. Մերգելյանը, Ա. Դ. Իոսիֆյանը, Ա. Հ. Ալիխանյանը, Ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Գ. Մանվելյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր Ա. Ե. Հակոբյանը հանդամանորեն խոսեցին Հայաստանի գիտության նվաճումների, զարգացման մեծ հեռանկարների և այն ներդրումների մասին, որ ռեսպուբլիկայի գիտնականները կատարում են յոթնամյա պլանով առաջ քաշված ժողովրդատնտեսական խնդիրների իրականացման ասպարեզում։

Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ղեկավար Ն. Ս. Խրուշչովը մեծ հետաքրքրություն ցուցաբերեց Հայաստանի գիտնականների աշխատանքների նկատմամբ։ Նա հանդամանորեն հարց ու փորձ արեց Հայաստանի ընդերքի հսկայական հարստությունների, նրանց արդյունաբերական նշանակության մասին, հետաքրքրվեց նեֆելինային սիենիտների օգտագործումով, տուֆից ստացվող արհեստական թելերով և այլ արժեքավոր նյութերով, հայկական բյուրեղապակու ստացումով, ֆիզիոլոգիական ակտիվ նյութերի սինթեզի ասպարեզում Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում ձեռք բերված նվաճումներով, էլեկտրոնային արագագործ հաշվիչ մեքենաների ստեղծման և ժողովրդական տնտեսության մեջ նրանց օգտագործման հարցերով։

Ն. Ս. Խրուշչովին մատուցվեցին բազմաթիվ նվերներ, որոնք արտացոլում են Հայաստանի գիտնականների աշխատանքը, բացահայտում այն մեծ հեռանկարները, որ ռեսպուբլիկայի գիտնականների հետազոտությունների շնորհիվ բացվում են ժողովրդական տնտեսության առջև։ Նվերների թվում հանձնվեց նաև Հայաստանի հանածոների գեղեցիկ ձևավորված մի հավաքածու։

Գիտնականների առջև փայլուն բովանդակալից ճառով հանդես եկավ Ն. Ս. Խրուշչովը։ Նա գիտնականներին շնորհակալություն հայտնեց կարևոր հաղորդումների համար, նշեց Հայաստանի գիտնականների կատարած աշխատանքների մեծ նշանակությունը, ընդգծեց այդ աշխատանքների ձեռք բերած համբավը։ Միաժամանակ ընկեր Խրուշչովը ավելացրեց, որ, իհարկե, չպետք է գոհոզանալ ձեռք բերված նվաճումներով, չպետք է բավարարվել դրանով, այլ անհրաժեշտ է առավել ուժեղացնել աշխատանքները նոր նվաճումների հասնելու համար։

Ընկեր Խրուշչովը մի շարք կարևոր ցանկություններ հայտնեց կյանքի հետ գիտության, պրակտիկայի հետ տեսության կապի հետագա ամրապնդման մասին, գիտնականների ուշադրությունը բևեռեց գործնական կարևորագույն խնդիրների լուծման վրա։

Հանդամանորեն անդրադառնալով ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի՝ գիտության վերակառուցման մասին ընդունված որոշման նշանակության, Ն. Ս. Խրուշչովը ընդգծեց, որ գիտական աշխատանքի վերակառուցումը համապետական լուրջ և կարևոր գործ է։ Եթե մինչև այժմ կարելի էր համաձայնվել, որ մի կենտրոնից հնարավոր է ղեկավարել գիտության բոլոր ճյուղերի գործունեությունը, ապա այժմ դա ռեալ չէ։ Արդեն ժամանակն է, որպեսզի գիտական հիմնարկների մի մասը հանձնվի այլ կազմակերպությունների, որոնք շահագրգռված են զարգացնել գիտության այս կամ այն ճյուղը։ Դա կր-

հասցնի գիտության և տեխնիկայի ավելի ճիշտ ղեկավարմանը, նրանց կարևոր և ակտուալ ճյուղերի ավելի արագ զարգացմանը։

Ես հույս ունեմ, ասաց Ն. Ս. Խրուշչովը, որ գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման Պետական կոմիտեի ստեղծումը կոժանդակի գիտության ամրապնդմանը մեր երկրում և հնարավորություն կտա այն պլանավորել ավելի ռացիոնալ։

Գիտության և տեխնիկայի դերը ավելի է մեծանում ներկայումս, երբ սովետական երկիրը մտել է կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը,—ասաց ընկեր Խրուշչովը։ Ներկա պայմաններում հատուկ նշանակություն է ձեռք բերում ժողովրդատնտեսական մեծ նշանակություն ունեցող կարևորագույն գիտական պրոբլեմների գծով տարվող տեսական հետազոտությունների հետագա ուժեղացումը, գիտության մոտեցումը արտադրությանը, գիտության նվաճումները արտադրության մեջ ներդնելը։

Ընդգծելով, որ սովետական գիտությունը ու տեխնիկան պետք է համաշխարհային գիտության մեջ միշտ գրավեն առաջավոր դիրքեր, ընկեր Խրուշչովը վստահություն հայտնեց, որ Հայաստանի գիտնականները այսուհետև ևս իրենց ուժերն ու գիտելիքները կնվիրաբերեն կոմունիստական շինարարության մեծ գործին, սովետական բազմազգ գիտության առաջավոր ընտանիքում իրենց լուման կմուծեն գիտության զարգացման գործում։

Հայաստանի գիտնականները ընկեր Խրուշչովի ճառը լսեցին բացառիկ հետաքրքրությամբ։ Նրանք ի դեմս ընկեր Ն. Ս. Խրուշչովի Սովետական Միության Կոմունիստական պարտիային և Սովետական կառավարությանը շնորհակալություն հայտնեցին սովետական գիտության և նրա ազգային ջոկատների նկատմամբ ցուցաբերած բացառիկ հոգատարության համար, հավաստիացրին Պարտիայի Լենինյան Կենտրոնական Կոմիտեին, որ ոչ մի ջանք չեն խնայի իրենց առջև դրված խնդիրները պատվով կատարելու, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում իրենց լուման մուծելու ուղղությամբ։

Ընկեր Խրուշչովը Բյուրականում Հայաստանի գիտնականների հետ անցկացրեց ավելի քան հինգ ժամ։